

**Անցկացվեցին <<< անկախության 24-րդ տարեդարձին նվիրված դպրոցականների հանրապետական 24-րդ մարզական խաղերի միջմարզային մրցումները**

15.04.2015թ.

Ապրիլի 15-ին Կապանում և Սիսիանում անցկացվեցին <<< անկախության 24-րդ տարեդարձին նվիրված դպրոցականների հանրապետական 24-րդ մարզական խաղերի ֆուտ-գալի և վոլեյբոլի միջմարզային մրցումները:

Ֆուտ-գալի մրցումներում հաղթող ճանաչվեցին Կապանի թիմը (մարզիչ Արման Գրիգորյան), իսկ վոլեյբոլում՝ Խնածախի միջնակարգ դպրոցի տղաների և աղջիկների թիմերը (մարզիչներ՝ Վարդան Բաղդասարյան և Աղվան Հակոբյան):

Հաղթող թիմերը ՀՀ ԿԳ նախարարության կողմից արժանացան պատվոգրերի և մարզը կներկայացնեն մրցումների եզրափակիչ փուլում:

Միջմարզային մրցումներն անցկացվում են աթլետիկա, բասկետբոլ, ֆուտբոլ, սեղանի թենիս, հանդբոլ, վոլեյբոլ, ֆուտ-գալ, բադմինթոն մարզաձևերից:

Մարզական խաղերին մասնակցում են հանրակրթական դպրոցների և այլ ուսումնական հաստատությունների երեխաներ և անցկացվում են 4 փուլերով, իսկ հիմնական դպրոցների 5-9-րդ և ավագ դպրոցների 10-12-րդ դասարանների աշակերտները հանդես են գալիս համատեղ և հավաքական կազմով:

Դպրոցականների հանրապետական մարզական խաղերի նպատակն է նպաստել ՀՀ դպրոցականների շրջանում ֆիզիկական դաստիարակության ծրագրի խնդիրների իրականացմանը, ֆիզիկական հմտությունների օբյեկտիվ գնահատմանը, ֆիզիկական կուլտուրան և մանկական սպորտը մատաղ սերնդի համակողմանի ու ներդաշնակ զարգացմանը, արտադպրոցական ու արտադասարանական աշխատանքների կայուն հիմքերի ամրապնդմանը, մարզական խաղերի նպատակաուղղումը սովորողների բարոյաֆիզիկական և հոգևոր հատկանիշների դաստիարակմանը, թիմային խաղերի միջոցով «Ֆիզիկական կուլտուրա» առարկայից ստացած գործնական գիտելիքների հարստացմանն ու ամրապնդմանը:

Միջնարգային և եզրափակիչ մրցումների նախապատրաստման, ուսումնամարզական հավաքների կազմակերպման, հանդերձանքի, մարզագույքի ձեռք բերման ծախսերը հոգացել են մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչությունը, դպրոցների տնօրինությունները և համայնքները: